ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ

Սովետական Հայաստանում, ինչպես բոլոր քաղաքացիների, այնպես էլ հայրենադարձ հայերի համար ստեղծվել են կրթության և գիտության մեջ խորանալու լավագույն հնարավորությունները։ Այդ առթիվ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, բիոլոգիական գիտությունների դոկտոր Մկրտիչ Տեր-Կարապետյանը մեր թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ ասաց.

— Ոչ մի տեղ գիտական աշխատողը ստեղծագործական աշխատանքի այնքան լայն հնարավորություններով և նյութական այնքան բարենպաստ պայմաններով չի ապահովված, որքան մեր սովետական Հայրենիքում։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան հիմնադրման օրից ունեցել է իր ասպիրանտուրան, որտեղ աճեցվել են գիտական կադրեր՝ գիտության տարբեր բնագավառների համար։ Մեր ակադեմիան ներկայումս ունի 100 ստացիոնար և արտադրությունից չկտրված 72 ասպիրանտներ։ Այդ թվում կան 14 հայրենադարձներ, որոնք բոլորն էլ գրեթե Հայրենիքում Պետական համալսարանը կամ ինստիտուտները գերազանցության դիպլոմով ավարտած և ուսման մեջ բացառիկ ընդունակություններ ցուցաբերած երիտասարդներ են։

Պողոս Սվաջյանը 1947 թվականին Եգիպտոսից Հայրենիք վերադառնալով, ընդունվեց Ակադեմիայի Կենդանաբանական ինստիտուտում որպես կրտսեր գիտական աշխատող։ Չանցած մի տարի, Սվաջյանը հաջողությամբ պաշտպանեց «Բիլհարցիոզ տարածող խլուրդների բիոլոգիան և անատոմիան» թեմայով իր դիսերտացիոն աշխատանքը և ստացավ բիոլոգիական գիտությունների թեկնածուի աստիճան։ Այժմ նա ավագ գիտական աշխատող է։ Հայաստանի անասնապահական շրջաններում և Երևանի կենդանաբանական այգում կենդանիների առողջության պահպանման պրակտիկ աշխատանքներին համընթաց Սվաջյանն այս վերջին տարիներս կատարել է նաև նոր գիտա-հետազոտական որոնումներ և հասել կոնկրետ արդյունքների։ Արդեն շարադրել է «Գյուղատնտեսական կենդանիների դիկրոցելիոզը և պայքարը նրա դեմ» թեմայով դոկտորական դիսերտացիան։

Իրանից հայրենիք եկած Ռաֆիկ Առաքելյանը 1947 թվականին ընդունվեց Ակադեմիայի ասպիրանտուրան՝ գեոլոգիական գիտությունների գծով։ Հայաստանի ակադեմիայի իսկական անդամ Կ. Պաֆենհոլցի ղեկավարությամբ Առաքելյանը գրեց իր դիսերտացիոն աշխատանքը և 1950 թվականին պաշտպանելով այն՝ ստացավ գեոլոգիական գիտությունների թեկնածուի աստիճան։ Այժմ նա աշխատելով Գեոլոգիայի ինստիտուտում որպես ավագ գիտական աշխատող՝ իր գիտելիքներն ու եռանդը իսպաս է դնում հայրենի գիտության զարգացմանը։ Առաքելյանը տարիների համառ և հետևողական աշխատանքից հետո, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Միխ. Վարենցովի ղեկավարությամբ պատրաստել է դոկտորական դիսերտացիա՝ «Հայաստանի պալեոզոյան նստվածքը» թեմայով։

Հայրենադարձներ Գևորգ Եղյանը, Տիրան Քրմոյանը, Հակոբ Թրյանցը, Վարդան Թեմուրջյանը և ուրիշներ արդեն ստացել են գիտական աստիճան և աշխատում են ակադեմիայի համապատասխան սեկտորներում, գրում են նոր աշխատություններ։ Օրինակ Վարդան Թեմուրջյանը գրել է երկու աշխատություն՝ «Գամերքի պատմա-ազգագրական ուսումնասիրությունը» և «Հայաստանի տեքստիլ արդյունաբերության աշխատողների կենցաղն ու կուլտուրան» և այժմ աշխատում է «Անասնապահությունը Հայաստանում՝ հնագույն շրջաններից մինչև մեր օրերը» նյութի վրա։

• Լիբանանից Հայրենիք վերադարձած, Գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության սեկտորի կրտսեր գիտական աշխատող Գասպար Գասպարյանը գրել է դիսերտացիոն աշխատանք՝ «Գալուստ Կոստանյանի



Բիոլոգիական գիտությունների թեկնածու Պողոս Սվաջյանը լաբորատորիայում աշխատանքի ժամին։ Ֆոտո՝ Ա. Ջալալյանի

Государственная
БИБЛИОТЕКА
СССР
им. В. И. Ленина



Պատմական գիտությունների բեկնածու Վարդան Թեմուրջյան։
Լուսանկարը՝ Ա. Ջալալյանի

Նկարիչ Առաքել Պատրիկը արվեստանոցում՝ աշխատանքի ժամանակ։

փիլիսոփայական հայացքները» թեմայով։ Իր դիսերտացիայից բացի, Գասպարյանը շարադրել է մի շարք այլ աշխատություններ. «Անգլո-ամերիկյան ռեակցիոն փիլիսոփայության քննադատությունը», որից մի հատված լույս է տեսել ակադեմիայի գիտական տեղեկագրում, «Դաշնակցական իդեոլոգիայի սնանկությունը» (10 մամուլի ծավալով, անտիպ), «ԺԹ դարի արևմտահայ պրոգրեսիվ միտքը» (30 մամուլ), որից խտացված մի ընդհանուր ակնարկ շուտով լույս կտեսնի «Սովետական ժողովուրդների փիլիսոփայության պատմության քառահատորյակում (ռուսերեն)։

Յոթերորդ տարին է, ահա, որ ակադեմիային կից Հայաստանի Պատմական թանգարանում որպես դծագրիչ-նկարիչ աշխատում է Եգիպտոսից ներգաղթած նկարիչ-գրող Առաքել Պատրիկը։ Բացի իր առօրյա աշխատանքներից, Պատրիկը պատրաստել է նաև Կ. Ղաֆադարյանի «Դվին քաղաքը և նրա պեղումները» պատմա-հնաբանական աշխատության չափագրված դծագրերն ու զարդանկարները, ստեղծել է Դվինի կենտրոնական թաղի վերակազմության ուշագրավ նկարը, որը ցուցադրվում է Պատմական թանգարանում։ Ակադեմիայի Արեղյանի անվան Գրականության ինստիտուտի կողմից պատրաստված «Հայ գրականության պատմություն» ձեռնարկներում եղած հայ գրողների, գրչակների զգալի մասը Պատրիկի գործերն են։ Պատրիկի աշխատությունն է դարձյալ Նաղաշ-Հովնաթանի նկարների ռեստավրացիան (գունավոր), որը հրատարակվել է նկարիչ-աշուղին նվիրված հատորում։ Այժմ նա պատրաստում է «Հայկական տարազի պատմություն» թեմայով մի ստվար հատոր սեփական տեքստով, նկարներով ու գծագրություններով։

Բացի վերոհիշյալ ավագ և կրտսեր գիտաշխատողներից, ակադեմիայի սիստեմում որպես բիբլիոգրաֆ, գրադարանավար, մեքենագրող, մեխանիկ-տեխնիկ և այլ պաշտոններում աշխատում են մի քանի տասնյակ հայրենադարձներ։ Նրանք բոլորն էլ ստանում են բավարար աշխատավարձ և տնտեսապես ապահովված են։ Ահա, օրինակ, 1948 թվականին Եգիպտոսից Հայրենիք եկած երիտասարդ Հարություն Մեքերյանը, որը սովորում է Պետական համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետի գրադարանային բաժնում և շուտով կավարտի։ Նա նպատակ ունի դառնալու ասպիրանտ, գիտությունների թեկնածու, դոկտոր։ Ինչո՞ւ չէ, բոլոր հնարավորությունները կան մեզ մոտ այդպիսի առաջընթացի համար։ Հարությունը կատարում է նաև հասարակական նուրբ աշխատանք։

— Սովետական Հայաստանում,— ասաց իր զրույցի վերջում գիտնականը, մարդիկ դափնիների վրա չեն հանգստանում, կյանքից ետ չեն մնում։ Ընդհանուր առաջխաղացը օրինաչափություն է մեզ մոտ։ Նրանք իրենց ջանքերը չեն խնայում, որպեսզի մեր մեծ Հայրենիքի առաջատար գիտությունը էլ ավելի ծաղկի։

ՀԱԿՈԲ ԱՐԱՄՅԱՆ